ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ———————— 2024թ. N ____ Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի ավագանին որոշում է.

1. Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածի 77-րդ կետից հետո լրացնել 77.1-րդ կետը՝ հետևյալ բովանդակությամբ.

   «77.1. Ավագանու նիստի սկզբին և նիստի ավարտին յուրաքանչյուր Խմբակցությունից մեկական ներկայացուցիչ ունի մինչև 3 րոպե ելույթի իրավունք:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ **Արամ Թորոսյան**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նշվում է, որ Երևան քաղաքի ավագանին ընդունում է իր կանոնակարգը: Համաձայն վերոհիշյալ օրենքի 29-րդ հոդվածի 8-րդ մասի՝ ավագանու նիստերի գումարման, նիստերում հարցերի քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:

Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածի 71-րդ կետը սահմանում է ավագանու նիստում հարցերի քննարկման ընթացակարգային դրույթներ: Ի թիվս այլ դրույթների նախատեսված է նաև ավագանու նիստի ընթացքում քննարկվող նախագծի վերաբերյալ մտքերի փոխանակության հնարավորություն, որի ընթացքում յուրաքանչյուր ելույթի համար տրվում է մինչև 5 րոպե ժամանակ: Սակայն տվյալ դեպքում ավագանու անդամի կարծիքի արտահայտումը սահմանափակված է քննարկվող նախագծի շրջանակներում:

Սույն լրացումն ուղված է ավագանու նիստի սկզբին և ավարտին խմբակցության անդամների ելույթներ ունենալուն և կարծիքներ արտահայտելուն: Այն հնարավորություն կընձեռնի նիստն անցնակցնել կառուցողական և փոխըմբռնման մթնոլորտում, ինչպես նաև նիստի ավարտին կատարելու հետևություններ և ներկայացնելու առաջարկություններ՝ հետագայում նիստերն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախագծով նախատեսվում է սահմանել, յուրաքանչյուր Խմբակցությունից մեկական ներկայացուցչի՝ նիստի ընթացքում մինչև 3 րոպե ելույթի իրավունք ունենալը:

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը Երևան քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ **Արամ Թորոսյան**